ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01/07/25

ք. Երևան 04.07.2025

Հայաստանի բանկերի միություն ՀԿ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախագահի տեղակալ Ռուբեն Մելիքյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Վահե Պետրոսյանը (այսուհետ՝ Կատարող, նույնականացման քարտ՝ 005765524, տրված 10.03.2017, 004-ի կողմից), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունը՝ անցկացնել «Բանկային Գործ» որակավորման ծրագրի շրջանակում դասընթաց (այսուհետ՝ Ծառայություն): Ծրագիրը շարունակական է լինելու:

1.3 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի միջև նախապես պայմանավորված ժամանակացույցին համապատասխան:

1.4 Կատարողը պարտավորվում է դասընթացներն անցկացնել դասախոսություններով, ցուցադրումներով, ինտերակտիվ քննարկումներով, գործնական և թիմային աշխատանքներով, իրական կյանքում հանդիպող գործնական օրինակների, իրավիճակային վերլուծություններով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. **Կատարողը պարտավոր է՝**

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով՝ սույն պայմանագրի կնքման պահից մեկ ամսվա ընթացքում,

2.1.2. Պատվիրատուի պահանջով անհապաղ և անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.3. Ծառայությունները մատուցել անձամբ,

2.1.4. Հաղորդակցել Պատվիրատուի կամ վերջինիս համապատասխան աշխատակիցների հետ՝ կապված սույն պայմանագրի հետ առաջացած բոլոր հարցերի դեպքում:

2.2. **Կատարողն իրավունք ունի** `

2.2.1. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված վճարման պայմանները խախտելու դեպքում՝ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից:

2.3. **Պատվիրատուն իրավունք ունի** `

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.3.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

2.3.3. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1 Սույն պայմանագրով Ծառայությունների վարձատրումը կազմում է 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ 1 (մեկ) ժամվա համար, որը ներառում է հարկերը և պարտադիր այլ վճարները:

3.2 Վճարումը կատարվում է Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 10 (տաս) օրվա ընթացքում:

3.3 Սույն Պայմանագրի համաձայն բոլոր վճարումները ներառում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու այլ պարտադիր վճարումները և կատարվում են ՀՀ դրամով՝ բանկային փոխանցումով:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 2025թ. հուլիսի 7-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 30-ը:

5.2 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին 10 օր առաջ գրավոր ծանուցելով:

5.3 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:

5.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.5 Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պատվիրատու՝	**Կատարող՝**
Հայաստանի բանկերի միություն ՀԿ	Վահե Պետրոսյան
ՀՎՀՀ՝ 02516765	ՀԾՀ՝ 3408860424
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ	Բանկ՝ "ԱյԴի բանկ" ՓԲԸ
Հաշվեհամար՝ 2474604428140000	Հաշվեհամար՝ 11800097728000
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա	Հասցե՝ ք. Երևան, Բակունցի 2, բն 88
Հեռ.՝ +374 10 527731	Հեռ.՝ +374 91 361155
_____	_____
Ռուբեն Մելիքյան	Վահե Պետրոսյան
Նախագահի տեղակալ	Դասընթացավար
Հայաստանի բանկերի միություն ՀԿ	